

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Անցումային տնտեսություն վարող երկրներում, ինչպիսին մաս Հայաստանի Հանրապետությունն է, տնտեսական աճի ապահովման գործընթացում իր ուրույն տեղն ունեն առևտրային բանկերը, ինչու չէ մաս վարկային կազմակերպությունները: Մակայն, ի տարբերություն վերջիններիս, առևտրային բանկերի կողմից իրականացվող ինչպես գործառնությունները, այնպես էլ գործառնությունները բավականաչափ բազմատեսակ են, քանի որ դրանք ոչ միայն զբաղվում են վարկային ներդրումներով, այլ մաս տարբեր հաճախորդներից դրամական միջոցների ներգրավումով: Ուստի այդ կարևորությունից ելնելով հատուկ ուշադրություն ենք հրավիրել ՀՀ առևտրային բանկերի բացարձակ և հարաբերական հիմնական ցուցանիշների վերլուծությանը: Բացարձակ առումով հիմնական ցուցանիշների թվին են դասվում ակտիվները, ընդհանուր կամ սեփական կապիտալը, պարտավորությունները, աշխատակիցների թվաքանակը, տոկոսային և ոչ տոկոսային եկամուտները, տոկոսային և ոչ տոկոսային ծախսերը, կանոնադրական և լրացուցիչ կապիտալները, եկամտաբեր ակտիվները, շահույթը և նմանատիպ այլ մեծություններ: Իրենց հերթին հարաբերական հիմնական ցուցանիշները հանդես են գալիս հետևյալ հարաբերակցությունների տեսքով.

1. Ակտիվներ / Աշխատակիցների թվաքանակ
2. Ձուտ շահույթ հարկումից հետո / Աշխատակիցների թվաքանակ
3. Տոկոսային ծախս / Տոկոսային եկամուտ
4. Կանոնադրական կապիտալ / Ընդհանուր կապիտալ
5. Լրացուցիչ կապիտալ / Ընդհանուր կապիտալ
6. Ընդհանուր կապիտալ / Ակտիվներ
7. Ընդհանուր կապիտալ / Պարտավորություններ
8. Կանոնադրական կապիտալ / Ակտիվներ
9. Հիմնական միջոցներ / Ակտիվներ
10. Վարկային ներդրումներ / Պարտավորություններ
11. Եկամտաբեր ակտիվներ / Ակտիվներ
12. Ձուտ տոկոսային եկամուտ / Եկամտաբեր ակտիվներ
13. Ձուտ շահույթ հարկումից հետո / Կանոնադրական կապիտալ
14. Ակտիվների օգտագործման գործակից (AU) = $\frac{\text{Գործառնական եկամուտ}}{\text{Ակտիվներ}}$
15. Ձուտ մարժա(NPM) = $\frac{\text{Ձուտ շահույթ հարկումից հետո}}{\text{Գործառնական եկամուտ}}$
16. Ընդհանուրկապիտալիշահութաբերություն(ROE) = $\frac{\text{Ձուտ շահույթ հարկումից հետո}}{\text{Ընդհանուր(սեփական) կապիտալ}}$

17. Ակտիվների շահութաբերություն (ROA) = $\frac{\text{Չուտ շահույթ հարկումից հետո}}{\text{Ակտիվներ}}$

Վերը նշվածներն իմաստավորելու համար կազմենք թիվ 1 աղյուսակը, որը ներառում է ՀՀ առևտրային բանկերի հիմնական բացարձակ ցուցանիշները:

Աղյուսակի տվյալներից պարզվում է, որ ըստ ուսումնասիրվող տարիների՝ բոլոր ցուցանիշների գծով աճման միտում է նկատվել: Նույնիսկ 2008թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ 9 ամսվա կտրվածքով նախորդ տարվա՝ 2007թ. վերջի համեմատությամբ (բացի լրացուցիչ կապիտալից, հարկումից հետո զուտ շահույթից և գործառնական եկամտից) մնացած ցուցանիշների գծով տեղի են ունեցել ավելացումներ: Հատկապես վարկային ներդրումները՝ 206573,8 մլն դրամի չափով կամ 51.4%-ով և այդ ավելացման մեջ ամենամեծ մասնաբաժինն ունեն «ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը, «ՎՏԲ-Հայաստան»-ը, «Արդշինինվեստբանկ»-ը, «Ակբա-Կրեդիտ-Ագրիկոլ-Բանկ»-ը և «Կոնվերսբանկ»-ը: Միաժամանակ վարկային ներդրումներին առընթեր ավելացել են նաև եկամտաբեր ակտիվները 182448.1 մլն դրամով կամ 30.7%-ով: Չնայած 37.4 %-ով աճել են տոկոսային ծախսերը՝ կապված պարտավորությունների հետ, սակայն աճման միտում է գրանցվել նաև տոկոսային եկամուտների գծով՝ 14.4 %-ի չափով: Հարաբերականորեն աճել են առևտրային բանկերի ընդհանուր ակտիվները՝ 22.3%-ով, ընդհանուր կապիտալը՝ 26.5%-ով և պարտավորությունները՝ 21.1%-ով:

Իսկ թե ինչպիսին է ՀՀ առևտրային բանկերի հիմնական հարաբերական ցուցանիշների դինամիկան և դրանց համեմատական վերլուծությունը, ներկայացնենք թիվ 2 աղյուսակը:

Արդյունքում, ըստ առևտրային բանկերի տարեկան հաշվետվությունների, տվյալներից պարզվում է, որ հաշվարկված հարաբերական ցուցանիշներից որոշ մասն ունեցել է միայն աճման միտում, իսկ հիմնական մասը ինչպես աճման, այնպես էլ նվազման միտում: Այսպես, եթե 2004թ. մեկ աշխատողի հաշվով ակտիվները կազմել են 86.720 մլն դրամ, ապա 2007թ. և 2008թ. 9 ամսվա առումով կազմել են համապատասխանաբար 114.334 մլն դրամ և 124.574 մլն դրամ: Վերջին երկու տարիների համեմատության արդյունքում 2007թ. նկատմամբ ակտիվների ավելացումը կազմել է 10.24 մլն դրամի չափով կամ 9.0 %-ով: Այդ ավելացումը հիմնականում տեղի է ունեցել «ՎՏԲ-Հայաստանի»-ի, «Արդշինինվեստբանկ»-ի «Ամերիաբանկ»-ի, «Ակբա-Կրեդիտ-Ագրիկոլ-Բանկ»-ի և «Կոնվերսբանկ»-ի կողմից մասնաճյուղերի բացման, ինչպես նաև տեխնիկական միջոցների ձեռքբերման առումով: Աղյուսակի 2-ի տվյալներից միաժամանակ պարզվում է, որ եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում, ըստ ուսումնասիրվող տարիների, ունեցել է աճման միտում, և արդյունքում այն 2008թ. 9 ամսվա առումով կազմել է 80.4%: Վերջինիս աճը, ինչպես նշեցինք վերևում, արդյունք է վարկային ներդրումների ավելացման:

Կատարված հաշվարկները վկայում են, որ ըստ տարիների բավականաչափ բարձր է գործառնական եկամուտներում հարկումից հետո զուտ շահույթի գումարի չափը՝ կամ այլ կերպ զուտ մարժան (NPV), որը համեմատաբար ամենաբարձրն է եղել 2005 թվականին՝ կազմելով 33.1 %: Չնայած պետք է նշել, որ գործառնական եկամուտները բացարձակ առումով ավելի շատ եղել են 2007թ. վերջին՝ 70375 մլն դրամի չափով (տե՛ս թիվ 1 աղյուսակը):

Այստեղից հետևություն, որ աղյուսակներում բերված հիմնական բացարձակ և հարաբերական ցուցանիշները հնարավորություն կտան յուրաքանչյուր վերլուծություն իրականացնողի գնահատել ոչ միայն իր կամ որևիցե առևտրային բանկի, այլ նաև ՀՀ բանկային համակարգի ընդհանուր ֆինանսական դրությունը:

ՀՀ առևտրային բանկերի հիմնական բացարձակ ցուցանիշների
համեմատական վերլուծությունը ըստ 2003-2007թթ. և 2008թ. 9 ամսվա տվյալների

Ցուցանիշների անվանումը	Տ ա ր ի ն ե ռ ը					Շեղումը (+,-) 30.09.2008թ./2007թ. համեմատությամբ	
	2004թ.	2005թ.	2006թ.	2007թ.	30.09.2008թ.	Բացարձակ վճ. դրամ	Հարաբերական %
	1	2	3	4	5	6 (այ.5 - այ.4)	7(այ.6: այ.4)
Ա							
1. Ակտիվներ	365004.5	451113.1	544165.6	790735.8	966693.9	175958.1	22.3
2. Ընդհանուր կապիտալ	63295.8	94810.2	120080.0	171813.2	217328.5	45515.3	26.5
3. Պարտավորություններ	301708.7	356303.0	424085.0	618922.7	749365.4	130442.7	21.1
4. Կանոնադրական կապիտալ	39245.0	60297.9	80107.6	116486.5	134474.6	17988.1	15.4
5. Լրացուցիչ կապիտալ	4949.7	4418.2	5121.4	10154.2	8975.7	-1178.5	-11.6
6. Չուտ շահույթ հարկումից հետո	10386.0	12199.4	17055.5	21195.6	19858.7	-1336.9	-6.3
7. Տոկոսային եկամուտ	27018.9	32928.6	43417.8	61484.2	70360.8	8876.6	14.4
8. Տոկոսային ծախս	8273.3	10286.9	12529.1	18946.7	26035.3	7088.6	37.4
9. Չուտ տոկոսային եկամուտ	18754.6	22641.7	30888.7	42537.5	44325.5	1788.0	4.2
10. Գործառնական եկամուտ	32101.0	36842.0	52343.0	70375.0	68635.0	-1740.0	-2.5
11. Եկամտաբեր ակտիվներ	268862.0	330125.0	399423.6	594572.7	777020.9	182448.1	30.7
12. Վարկային ներդրումներ	130196.0	181672.2	225819.1	401719.7	608293.5	206573.8	51.4
13. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	23211.8	26658.2	32912.3	44368.8	54588.5	10219.7	23.0
14. Աշխատակիցների թվաքանակ	4209	4966	5665	6916	7760	844.0	12.2

վճ.դրամ

ՀՀ առևտրային բանկերի երկնական հարաբերական ցուցանիշների
համեմատական վերլուծությունը ըստ 2004-2007թթ. և 2008թ. 9 ամսվա տվյալներով

Ցուցանիշների անվանումը	Տարիներ					Շեղումը (+,-)	
	2004թ.	2005թ.	2006թ.	2007թ.	30.09.2008թ.	Բացարձակ մլն դրամ	Հարաբերական %
Ա	1	2	3	4	5	6	7
1. Ակտիվներ / (Աշխատ. քվադր.) մլն դրամ	86.720	90.840	96.057	114.334	124.574	10.24	9.0
2. Զուտ շահույթ հարկումից հետո / Աշխատ. քվադր. մլն դրամ	2.468	2.457	3.011	3.065	2.559	-0.506	-16.5
3. Տոկոսային ծախս / Տոկոս. եկամուտ, %	30.6	31.2	28.9	30.8	37.0	6.2	20.1
4. Կանոնադրական կապիտալ / Ընդհ. կապ., %	62.0	63.6	66.7	67.8	61.9	-5.9	-8.7
5. Լրացուցիչ կապիտալ / Ընդհ. կապ., %	7.8	4.7	4.3	5.91	4.13	-1.78	-30.1
6. Ընդհանուր կապիտալ / Ակտիվներ, %	17.3	21.0	22.1	21.7	22.5	0.8	3.7
7. Ընդհ. կապ. / Պարտավ. %	21.0	26.6	28.3	27.8	29.0	1.2	4.3
8. Կանոնադր. կապիտալ / Ակտիվներ., %	10.75	13.37	14.72	14.73	13.91	-0.82	-5.6
9. Հիմն. միջոց. / Ակտիվներ., %	6.36	5.91	6.05	5.61	5.65	0.04	0.7
10. Վարկ. ներդր. / Պարտավ., %	43.2	51.0	53.2	64.9	81.2	16.3	25.1
11. Եկամուտ. ակտիվներ / Ակտիվներ., %	73.7	73.2	73.4	75.2	80.4	5.2	6.9
12. Զուտ տոկոսային եկամուտ / Եկամ. ակտիվ., %	7.0	6.9	7.7	7.2	5.7	-1.5	-20.8
13. Զուտ շահույթ հարկումից հետո / Կանոնադր. կապ., %	26.5	20.2	21.3	18.2	14.8	-3.4	-18.7
14. Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	8.8	8.2	9.6	8.9	7.1	-1.8	-20.2
15. Զուտ մարծա (NPM)%	32.4	33.1	32.6	30.1	28.9	-1.2	-4.0
16. Ընդհան. կապիտալ շահութաբերություն (ROE), %	16.4	12.9	14.2	12.3	9.1	-3.2	-26.0
17. Ակտիվների շահութաբերություն (ROA), %	2.8	2.7	3.1	2.7	2.1	-0.6	-22.2
18. Բանկի մուլտիպլիկատոր, (EM)	9.301	7.481	6.793	6.788	7.189	0.401	5.6